ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ք. Երևան «22» 10 2024թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և «Գլոբ աուդիտ» ՍՊԸ-ի միջև 02.04.2024թ-ին կնքված ՏԿԵՆ-ԷԱՃԾՁԲ-24/23-1 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) արդյունքում ծառայության ընդունման գործընթացի հետ կապված՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5.1 հոդվածը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի №526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 50.1 կետի պահանջներով, նախատեսված Պայմանագրի շրջանակներում պատասխանատու ստորաբաժանման հետ համատեղ «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի լիազորված անձանց թույլատրվել է իրականացնելու հանրային հսկողություն: Վերջինս «Գլոբ Աուդիտ» ՍՊԸ-ի կողմից ս.թ. առաջին կիսամյակում իրականացված թվով 10 աուդիտորական առաջադրանքների արդյունքում մշակված և հաստատված աուդիտորական վերջնական հաշվետվությունների (այսուհետ՝ Հաշվետվություններ) հետ կապված ներկայացրել է դիրքորոշումներ: Ընդ որում, ներկայացրած դիրքորոշումները հիմնականում վերաբերելի են եղել ինչպես ընթացակարգային անհամապատասխանությունների արձանագրմանը՝ ներքին աուդիտի հաշվետվությանը ներկայացվող պահանջների պահպանմանը, այնպես էլ աուդիտորական առաջադրանքի շրջանակներում ընկերություններում արձանագրված անհամապատասխանությունների, վերջիններիս իրավական կարգավորումների տարաբնույթ և այլակերպ մեկնաբանմանը և այլն:

Ներկայացված դիրքորոշումները քննարկվել են պատասխանատու ստորաբաժանման և «Գլոբ Աուդիտ» ՍՊԸ-կողմից:

Ողջամտորեն ընդունելի առաջարկների մասով «Գլոբ Աուդիտ» ՍՊԸ-ի կողմից Հաշվետվություններում կատարվել են համապատասխան շտկումներ:

Հիմք ընդունելով «Գլոբ աուդիտ» ՍՊԸ-ի պարզաբանումները, համատեղ քննարկումների արդյունքներով Նախարարության պատասխանատու ստորաբաժանումը գտնում է, որ «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի խորհրդատվական բնույթի առարկությունները պարզաբանված են և Պայմանագրի շրջանակներում ներկայացված Հաշվետվությունները ենթակա են ընդունման:

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ _____ Վ. Հայրապետյան

Գնման հայտը նախագծած ներկայացուցիչ՝ _____ Ռ. Օհանջանյան